

Հայութ ԵԵ կ մասնաւորապես, բայց մշտականինով
այս անհաջող գործառնութեան վեհանունը՝ 0022. Եկ ապրաւա
ամենի ապրաւա ապրաւա ապրաւա ապրաւա ապրաւա ապրաւա
ապրաւա ապրաւա ապրաւա ապրաւա ապրաւա ապրաւա ապրաւա
ՏԱՃԿԱՆԱՅԻ իջուրլեան զԱՏՐԻԱՐՔԻ ԿՈՉԸ

Պատուական մերազնէից՝ որ ի Մայրաքաղաքս, ի
օփիւռս Թուրքիոյ և Սրտասահմանի, ողջոյն տիրաւանդ
և օրհնութիւն երկնապարգևած առաջարկութեան մասնաւորապես ապրաւա
Հայաստանի զանազան գաւառներու և Կիլիկիոյ այլշ
հայլ կողմերու ժողովրդեան կարօտութիւնը իր ծայրագոյն
աստիճանին հասած է և համատարած սովոր լեցնելով լնկ-
ճուած ու ջախջախուած ժողովրդեան թշուառութեան չա-
փը՝ սկսած է նախնիներ գործել, մանաւանդ ձմրան այս
սաստկաշունչ եղանակին՝ երբ հեռագիրն ու թղթաքերն
ամէն օր ամէն կողմէ կը հասցնեն մեղ սովալլուկ բազ-
մութեան օգնութեան աղաղակները, ողբագին կոծերը,
օրհասականի հանդիւնի պէս աղեխարշ, և կը գուժեն
կեանքերու կորուստը, որք յառաջ կուգան անսուազութեան
հետեանօք. Ազգային Պատրիարքարանը նպաստից Յան-
ձնաժողովոյ միջոցաւ թէպէտե ամէն միջոց ձեռք առած է
դարման տանելու այս դառն կացութեան և սպառնացող
մեծ վտանգին, թէպէտե մեր ողորմածասէր ժողովուրդը
անտարբեր չի հանդիսանար այս ծանր աղետին ու կը կար-
կառէ իր օգնութեան ձեռքը՝ փութացնելով սիրոյօժար
իր նպաստի ու ողորմութեան լուման, սակայն բաւական
ՆԲԱՐ ան մեղմացնելու չարիք ահաւոր աղետին, որ կը
սպառնայ գոյութեան տարաբաղդ կեանքերու, որք յոյժ
ստուար են թուով.

Իբրև հայր հասարակաց կը փութամ պարզել կացու-
թիւնը մեր բարեպաշտ ժողովրդեան, և այս կոչը կ'ուղղեց
անոր ամեն դասակարգի անդամոց անխտիր, խնդրելով
ամէն ոք՝ վաճառական թէ խանութպան, արհես-
տաւոր թէ մշակ, իր զգացմանց կարողութեանն չափով

բերէ ընծայէ մեզ իր ձեռնտուութիւնը՝ իր օգնութեան լուսան, որ սահմանուած է կեանքեր խլելու թշուառութեանց ու մահուան ճիրաններէն, դիմագրաւ կենալու մեծ աղետին:

Յուսալից ենք որ մեր սիրեցեալ և պատուական ժռազովուրդը՝ որ ի Տաճկաստան, ի Ռուսիա, ի Հնդիկս, ի Պարսկաստան, յԱմերիկա, յԵւրոպա և այլուր, կշռելով աղետին մեծութիւնը, անոր անդարմանելի հետեանքներըն և մեր վրայ ծանրացող պարտականութիւնը, յօժարակամ սիրով պիտի պատասխանէ մեր կոչին և գործնապէս ցոյց պիտի տայ այն գորովալից սէրն ու համակրանքը, զորո կը տածէ մեծապէս առ իւր տառապեալ և օրհասական համարիւն եղբայրներն ու առ Ազգն համօրէն:

Կ'օրհնենք համայն նուիրատուններն և կը հայցեմք որ Նախախնամողն Տիեզերաց, Պարգևիչն Բարեաց ի հաճոյս իւր ընդունի անոնց զուարթառատ տուրքն ու ողորմութիւնն և լնու զիրենք բեղուն բարեօք ու մշտառե բարորութեամբ:

Ազօթարար

Պատրիարք Կ. Պօլսոյ

Մատքենս Արքեպիսկոպոս

27. Նոյեմբեր 1908.

ՔԱՂՈՒԱԾՔ ԱԶԳԱՑԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ

Խառն Ժողովը նիստ գումարեց երէկ Նալաթիոյ Խորհրդարաննեն մէջ, Նախադահութեամբ Ա. Պատրիարք Հօր: Ազգային Ժողովոյ որոշման համաձայն Երուսալէմ ուղևորուելիք Յանձնաժողովոյ անդամները Տ. Ստեփանոս Արքեպիկ. Յովակիմեան, Տիգրոն Բարաղամեան և Միջա Մոերեան Էֆ. Ներն իրենց անձնական տկարութեան պատճառաւ հրաժարական մատուցած էին: Ժողովն ու շաղրաւթեան առաւ նոյն գրերն և նոր ընտրութեամբ վերակազմելով Յանձնաժողովն՝ անդամ կարգեց անոր Տ. Յակոբ Եպիսկոպոս Աշոտ, Տ. Գրիգորիս Վարդ, Պալաքեան, Յակոբ